ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՆՄՇՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-20/23-3

ք. Երևան 2 հոկտեմբերի 2020 թ.

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը ի դեմս գործադիր տնօրեն Անահիտ Պարզյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կարեն Սուքիասյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

1.2 Վաճառողը ապրանքները մատակարարում է Գնորդի կողմից տրված պատվերի հիման վրա և պատվերում սահմանված քանակներով:

1.3 Գնորդը պատվերները տալիս է էլեկտրոնային ձևով կամ բանավոր:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **512 022** (հինգ հարյուր տասներկու հազար քսաներկու) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Եթե մինչև պայմանագրի ավարտը Գնորդը չի պատվիրում Ապրանքի մի մասը, ապա Պայմանագրի գինը նվազում է այդ մասի չափով:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

5.5 Եթե մինչև պայմանագրի ավարտը Գնորդը չի պատվիրում Ապրանքի մի մասը, ապա Պայմանագիրը չմատակարարված ապրանքի չափով համարվում է լուծված և կողմերի նկատմամբ չի սահմանվում տույժ կամ տուգանք այդ մասով չմատակարարված ապրանքի համար:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ	ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 68	Հասցե՝ ք. Երևան, Վարդանանց 18/2
Հայէկոնոմ բանկ ԲԲԸ, Ջերմուկ մ/ճ	«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 163518012543	Հ/Հ 1660000446270100
Հեռ.՝ 011 50 18 06	Հեռ.՝ 010 54-43-48, 095 51-99-17
Էլ. հասցե՝ norq@norq.am	Էլ. հասցե՝ corp@patron.am
ՀՎՀՀ՝ 02602449	ՀՎՀՀ՝ 00861057
Գործադիր տնօրեն _____ Անահիտ Պարզյան (ստորագրություն) Կ.Տ	Տնօրեն _____ Կարեն Սուքիասյան (ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 1
2 հոկտեմբերի 2020 թ. կնքված
ՆՄՈՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-20/23-3 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Լոտերի											
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	Ենթակա քանակը	Ժամկետը
1	30121480	Տոներ HP 1005/1505	Handan Hanguang, HG TONER, HP LJ P1005/ 1606 (HG361)	Փոշի տոներ նախատեսված HP 1005/1505/1606 տպիչների քարթրիջների համար, քիմիական տեխնոլոգիայով արտադրված, սև ու սպիտակ տպագրության համար, բարձր որակի, տպված նյութի լիարժեք մգություն ապահովող, գործարանային արտադրանք հանդիսացող, օրիգինալ: Փաթեթավորումը՝ պլաստմասսե վակումային հերմետիկ փակ տարայով անհատական գործարանային փաթեթավորմամբ: Յուրաքանչյուր տարայի պարունակությունը 90 գր: Փոշու 90 գրամի համար տպագրության չափաքանակը (ռեսուրսը) էջի 5% լցվածության դեպքում կազմում է 1500 էջ: Փոշին համատեղելի է բոլոր արտադրողների թմբուկների հետ: Փոշու արտադրման և փաթեթավորման տարեթիվը 2020թ, 2-րդ կիսամյակ: Մատակարար ընկերությունը պարտավոր է ներկայացնել նամակ-հավաստագիր արտադրողի կողմից, որը թույլ է տալիս մատակարարին պաշտոնապես ներկրել տվյալ փոշին /տոներ/ Հայաստանի Հանրապետություն: Մատակարարը յուրաքանչյուր խմբաքանակի համար տրամադրում է առնվազն մեկ տարվա պահպանման երաշխիք՝ մատակարարման օրվանից հաշված, և շրջակա միջավայրի պաշտպանության հավաստագիր:	կգ	9000	81000	9	ք. Երևան, Կարապետ Ուկնեցու 68	9	մինչև 25.12.2020թ

3	30121480	Տոներ Samsung Universal N2 / Xerox և Lexmark տպիչներ/	Handan Hanguang, HG TONER, Samsung universal ML-1710 /1610/1660/ 1910 (HG192)	Փոշի տոներ նախատեսված Xerox 3117/3124/3110//3220/120i, Lexmark x264, x363, E260 և Samsung 3405/2250/1600/1610 տպիչների քարթրիջների համար,քիմիական տեխնոլոգիայով արտադրված, սև ու սպիտակ տպագրության համար, բարձր որակի, տպված նյութի լիարժեք մգություն ապահովվող, գործարանային արտադրանք հանդիսացող, գործարանային մակնշումով Փաթեթավորումը՝ պլաստմասսե վակուումային, հերմետիկ փակ տարայով՝ անհատական գործարանային փաթեթավորմամբ: Յուրաքանչյուր տարայի պարունակությունը 1 կգ: Փոշու 100 գրամի համար տպագրության չափաքանակը (ռեսուրսը) էջի 5% լցվածության դեպքում կազմում է 2000 էջ, իսկ թափոնը չի գերազանցի 10 գրամը: Փոշին համատեղելի է բոլոր արտադրողների թմբուկների հետ: Մատակարար ընկերությունը պարտավոր է ներկայացնել նամակ-հավաստագիր արտադրողի կողմից, որը թույլ է տալիս մատակարարին պաշտոնապես ներկրել տվյալ փոշին /տոներ/ Հայաստանի Հանրապետություն: Փոշու արտադրման և փաթեթավորման տարեթիվը 2- րդ կիսամյակ 2020թ.: Մատակարարը յուրաքանչյուր խմբաքանակի համար տրամադրում է առնվազն մեկ տարվա պահպանման երաշխիք՝ մատակարարման օրվանից հաշված, և շրջակա միջավայրի պաշտպանության հավաստագիր:	կգ	7200	252000	35	ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 68	35	մինչև 25.12.2020թ
6	30121450	HP 2100 տպիչի քարթրիջի թմբուկ	SGT Ltd, HP LJ 2100	HP LJ 2100/2200 տպիչի քարթրիջի թմբուկ՝ նախատեսված 3-5 անգամ լիցքավորման համար, բարձր որակի, նյութի լիարժեք մգություն ապահովվող, 6 ամիս երաշխիքով, անհատական գործարանային փաթեթավորմամբ	հատ	2220	66600	30	ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 68	30	մինչև 25.12.2020թ
11	30121450	Lexmark x264dn տպիչի քարթրիջի թմբուկ	Handan Hanguang, HG OPC DRUM, E260/E360/ E460 HG	Lexmark x264 տպիչի քարթրիջի թմբուկ կոմպլեկտավորող պլաստմասե ֆիքսատորներով, նախատեսված 3-5 անգամ լիցքավորման համար, բարձր որակի, նյութի լիարժեք մգություն ապահովվող, 6 ամիս երաշխիքով, (անհատական գործարանային	հատ	2610	65250	25	ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 68	25	մինչև 25.12.2020թ

				փաթեթավորմամբ)							
13	30121450	Canon LBP 212 տպիչի քարթրիջի ռետինե գլան	ATZ, HP LJ Pro M402/M403 /M427/ M506/ M527	Ռետինե գլան նախատեսված Canon LBP 212 տպիչների քարթրիջների համար, տոներների քիմիական մնացորդների քայքայումից պաշտպանիչ շերտով (գործարանային փաթեթավորմամբ, պաշտպանիչ շերտով)	հատ	600	3000	5	ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 68	5	մինչև 25.12.2020թ
14	30121450	HP 1010/1020 տպիչի քարթրիջի մաքրող դանակ	NVP, HP LJ 1010/1012/ 1015/1200/ IR1018	Մաքրող դանակ HP 1010/1020 տպիչի քարթրիջի համար, անհատական գործարանային փաթեթավորմամբ	հատ	300	2400	8	ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 68	8	մինչև 25.12.2020թ
15	30121450	Canon LBP 212 տպիչի քարթրիջի մաքրող դանակ /M402/	NVP, HP LJ M402/ M426/427	Մաքրող դանակ Canon LBP 212 տպիչի քարթրիջի համար, անհատական գործարանային փաթեթավորմամբ	հատ	450	900	2	ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 68	2	մինչև 25.12.2020թ
16	30121450	HP 1005 տպիչի քարթրիջի դոզավորող դանակ	ATZ, HP LJ P1005	Դոզավորող դանակ HP 1005 տպիչի քարթրիջի համար նախատեսված, անհատական գործարանային փաթեթավորմամբ	հատ	294	2352	8	ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 68	8	մինչև 25.12.2020թ
17	30121450	HP 1010 տպիչի քարթրիջի դոզավորող դանակ	ATZ, HP LJ 1010	Դոզավորող դանակ HP 1010 տպիչի քարթրիջի համար նախատեսված, անհատական գործարանային փաթեթավորմամբ	հատ	300	1500	5	ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 68	5	մինչև 25.12.2020թ
18	30121450	HP 2100 տպիչի քարթրիջի դոզավորող դանակ	ATZ, HP LJ 2100	Դոզավորող դանակ HP LJ 2100 տպիչի քարթրիջի համար նախատեսված, անհատական գործարանային փաթեթավորմամբ	հատ	990	9900	10	ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 68	10	մինչև 25.12.2020թ
19	30121450	Canon LBP 212 տպիչի քարթրիջի դոզավորող դանակ	NVP, HP LJ M402/ M426/427	Դոզավորող դանակ Canon LBP 212 տպիչի քարթրիջի համար նախատեսված, անհատական գործարանային փաթեթավորմամբ	հատ	300	1500	5	ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 68	5	մինչև 25.12.2020թ
20	30121450	Canon LBP	NVP,	Դոզավորող դանակ Canon LBP 6300 տպիչի	հատ	300	7500	25	ք. Երևան,	25	մինչև

		6300 տպիչի քարթրիջի դոզավորող դանակ	HP LJ P2035/ P2055/ Canon LBP6300DN	քարթրիջի համար նախատեսված, անհատական գործարանային փաթեթավորմամբ					Կարապետ Ուլնեցու 68		25.12.2020թ
22	30121450	HP 2100 տպիչի քարթրիջի մագնիսական գլան	ATZ, HP LJ 2100/2300/ 2400/2410/ 2420/3005/ 3015/4000/ 4100	Նախատեսված HP LJ 2100 տպիչի քարթրիջի համար, տոներների քիմիական մնացորդների քայքայումից պաշտպանիչ շերտով (գործարանային փաթեթավորմամբ, պաշտպանիչ շերտով)	հատ	1560	6240	4	ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 68	4	մինչև 25.12.2020թ
23	30121450	HP 1200 տպիչի ֆյուզերի ջերմաժապավեն	ATZ, HP LJ 1200	Ջերմաժապավե ննախատեսված, HP LJ 1200 տպիչի համար նախատեսված, անհատական գործարանային փաթեթավորմամբ	հատ	1170	4680	4	ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 68	4	մինչև 25.12.2020թ
24	30121450	CANON LBP6300 տպիչի ֆյուզերի ջերմաժապավեն	ATZ, HP LJ P2035/ 2055/2015/ M401/ M425	Ջերմաժապավեն նախատեսված Canon I-Sensys LBP 6300/6670/HP LJ2015,P2035 տպիչների համար, անհատական գործարանային փաթեթավորմամբ	հատ	1800	7200	4	ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 68	4	մինչև 25.12.2020թ

ԳՆՈՐԴ

«Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 68
Հայէկոնոմ բանկ ԲԲԸ, Ձեյթուն մ/ճ
Հ/Հ 163518012543
Հեռ.՝ 011 50 18 06
Էլ. հասցե՝ norq@norq.am
ՀՎՀՀ՝ 02602449
Գործադիր տնօրեն _____ Անահիտ Պարզյան
(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Վարդանանց 18/2
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660000446270100
Հեռ.՝ 010 54-43-48, 095 51-99-17
Էլ. հասցե՝ corp@patron.am
ՀՎՀՀ՝ 00861057
Տնօրեն _____ Կարեն Սուքիասյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
2 հոկտեմբերի 2020 թ. կնքված
ՆՄՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-20/23-3 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ապրանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	30121480	Տոներ HP 1005/1505	Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ փաստացի մատակարարումից հետո ոչ ավել ուշ, քան 20 աշխատանքային օրից											
3	30121480	Տոներ Samsung Universal N2 / Xerox և Lexmark տպիչներ/	Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ փաստացի մատակարարումից հետո ոչ ավել ուշ, քան 20 աշխատանքային օրից											
6	30121450	HP 2100 տպիչի քարթրիջի թմբուկ	Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ փաստացի մատակարարումից հետո ոչ ավել ուշ, քան 20 աշխատանքային օրից											
11	30121450	Lexmark x264dn տպիչի քարթրիջի թմբուկ	Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ փաստացի մատակարարումից հետո ոչ ավել ուշ, քան 20 աշխատանքային օրից											
13	30121450	Canon LBP 212 տպիչի քարթրիջի ռետինե գլան	Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ փաստացի մատակարարումից հետո ոչ ավել ուշ, քան 20 աշխատանքային օրից											
14	30121450	HP 1010/1020 տպիչի քարթրիջի մաքրող դանակ	Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ փաստացի մատակարարումից հետո ոչ ավել ուշ, քան 20 աշխատանքային օրից											
15	30121450	Canon LBP 212 տպիչի քարթրիջի մաքրող դանակ /M402/	Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ փաստացի մատակարարումից հետո ոչ ավել ուշ, քան 20 աշխատանքային օրից											

16	30121450	HP 1005 տպիչի քարթրիջի դոզավորող դանակ	Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ փաստացի մատակարարումից հետո ոչ ավել ուշ, քան 20 աշխատանքային օրից
17	30121450	HP 1010 տպիչի քարթրիջի դոզավորող դանակ	Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ փաստացի մատակարարումից հետո ոչ ավել ուշ, քան 20 աշխատանքային օրից
18	30121450	HP 2100 տպիչի քարթրիջի դոզավորող դանակ	Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ փաստացի մատակարարումից հետո ոչ ավել ուշ, քան 20 աշխատանքային օրից
19	30121450	Canon LBP 212 տպիչի քարթրիջի դոզավորող դանակ	Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ փաստացի մատակարարումից հետո ոչ ավել ուշ, քան 20 աշխատանքային օրից
20	30121450	Canon LBP 6300 տպիչի քարթրիջի դոզավորող դանակ	Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ փաստացի մատակարարումից հետո ոչ ավել ուշ, քան 20 աշխատանքային օրից
22	30121450	HP 2100 տպիչի քարթրիջի մագնիսական գլան	Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ փաստացի մատակարարումից հետո ոչ ավել ուշ, քան 20 աշխատանքային օրից
23	30121450	HP 1200 տպիչի ֆյուզերի ջերմաժապավեն	Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ փաստացի մատակարարումից հետո ոչ ավել ուշ, քան 20 աշխատանքային օրից
24	30121450	CANON LBP6300 տպիչի ֆյուզերի ջերմաժապավեն	Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ փաստացի մատակարարումից հետո ոչ ավել ուշ, քան 20 աշխատանքային օրից

ԳՆՈՐԴ

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 68
Հայէկոնոմ բանկ ԲԲԸ, Զեյթուն մ/ճ
Հ/Հ 163518012543
Հեռ.՝ 011 50 18 06
Էլ. հասցե՝ norq@norq.am
ՀՎՀՀ՝ 02602449
Գործադիր տնօրեն՝ _____ Պանահիտ Պարզյան
(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Վարդանանց 18/2
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660000446270100
Հեռ.՝ 010 54-43-48, 095 51-99-17
Էլ. հասցե՝ corp@patron.am
ՀՎՀՀ՝ 00861057
Տնօրեն՝ _____ Կարեն Սուքիասյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 3
2 հոկտեմբերի 2020 թ. կնքված
ՆՍՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-20/23-3 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
2 հոկտեմբերի 2020 թ. կնքված
ՆՄՈՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-20/23-3 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն